**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1-1**

ք. Երևան «19» 01 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուդիկ Տեր–Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Եվրոպական քաղաքական համայնքի /ԵՔՀ/ 8-րդ գագաթնաժողովի կազմակերպման և անցկացման հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1656295200 (մեկ միլիարդ վեց հարյուր հիսունվեց միլիոն երկու հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ 300 000 000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:[1]

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ

---

[1] *Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով:*

մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

---

[2] *Քանի որ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 **աշխատանքային օրվա ընթացքում**: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ |
| Ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 1 | ք. Երևան, ք. Երևան, Բաղրամյան 21/3 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ - | Հ/Հ 1660004718200100 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 00167818 |
| ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. | ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«19» 01 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1-1 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 79951100/514 | ԵՔՀ 8-րդ գագաթնաժողովի կազմակերպման և անցկացման հետ կապված ծառայություններ՝ համաձայն պայմանագրի հավելված 1.1-ի | դրամ | 1 656 295 200 | 1 | Համաձայն տեխնիկական բնութագրի | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո համաձայն տեխնիկական բնութագրի |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Վարչապետի աշխատակազմ
Ք.Երևան, Հանրապետության հր.,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ -
ՀՎՀՀ 02505554

-----------------------------
(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, ք. Երևան, Բաղրամյան 21/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 00167818

-----------------------------
(ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված N 1.1*
*«19» 01 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-26/1-1 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
## ԵՔՀ 8-րդ գագաթնաժողովի կազմակերպման և անցկացման հետ կապված ծառայությունների

**Միջոցառման ընդհանուր նկարագիր**

- Եվրոպական քաղաքական համայնքի (ԵՔՀ, European Political Community) 8-րդ գագաթնաժողովը տեղի է ունենալու 2026թ. մայիսի 4-ին՝ Հայաստանի Հանրապետությունում:
- Բուն գագաթնաժողովը նախատեսված է կազմակերպել 2026թ. մայիսի 4-ին, ՀՀ ք. Երևան, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:
- 2026թ. մայիսի 3-ին պատվիրակությունների ղեկավարների համար նախատեսվում է կազմակերպել պաշտոնական ընթրիք Դվին հյուրանոցի Սթեյջ սրահում՝ մշակութային համարով՝ պատվիրակության ղեկավարների համար՝ առավելագույնը 55 անձի համար (երկրների առաջնորդներ և կազմակերպությունների ղեկավարներ) և զուգահեռ՝ մինչև 110 անձի համար առանձին սրահում ճաշի կազմակերպում՝ ֆուրշետի ձևաչափով (պատվիրակության ղեկավարների անվտանգության աշխատակիցների և արարողակարգի ներկայացուցիչների համար):
- Գագաթնաժողովին նախատեսվում է շուրջ 500 մասնակից՝ մոտ 47 երկրների և 8 միջազգային կազմակերպությունների ղեկավարներ և պատվիրակությունների անդամներ (55 պատվիրակություն), ինչպես նաև շուրջ 1000 ԶԼՄ ներկայացուցիչներ: Հաշվի առնելով, որ հյուրընկալող կողմը Հայաստանն է՝ հավանական է նաև ՀՀ ճյուղային տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով մասնակցություն /մինչև 50 հոգի/:
- Միջոցառման շրջանակներում 2026թ. մայիսի 4-ին **ՄՀՀ-ում** տեղի է ունենալու՝

- ՀՀ վարչապետի կողմից պատվիրակությունների ղեկավարների դիմավորման պաշտոնական արարողություն **/handshake ceremony, ձեռքսեղմման արարողություն/**
- Գագաթնաժողովի բացման **մշակութային արարողություն** /փոքր դահլիճում/
- Family Photo- ղեկավարների մասնակցությամբ
- Գագաթնաժողով՝ պլենար հատված, 5-6 ելույթներ
- 4 կլոր սեղան քննարկում՝ ըստ նախապես բաժանված խմբերի
- Պատվիրակությունների ղեկավարների համար ճաշ
- Երկկողմ/բազմակողմ հանդիպումներ
- Փակման պլենար նիստ
- Մամուլի ասուլիս

:

**Գագաթնաժողովի անցկացման ընթացքում անհրաժեշտ դահլիճների և սրահների մանրամասն նկարագիր/սրահներ.**

- Գագաթնաժողովի անցկացման համար Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի վարձակալություն (**ներառյալ՝ օդափոխություն և ջեռուցում**):
- ՄՀՀ ողջ տարածքում ջերմությունը անհրաժեշտ է պահպանել 22-24 աստիճանի միջակայքում (ըստ Ցելսիուսի):
- ՄՀՀ–ի սրահների և մեծ դահլիճի տրանսֆորմացիա խիստ ձայնամեկուսիչ պատերով, պատերի բարձրությունը առնվազն 4 մետր:
- Դահլիճների կահավորում և ձևավորում՝ Գագաթնաժողովի ձևաչափին և բրենդավորմանը համապատասխան:
- Բաներների, դեկորացիաների, վարագույրների, լեդ էկրանների, ինչպես նաև լուսային սարքավորումների ապահովում՝ համապատասխան դահլիճների չափսերին:

***Բոլոր սրահների տեղաբաշխումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:***

**ՄՀՀ-ի մեծ դահլիճը՝ բաժանման եղանակով, ընդգրկում է.**

- VIP Lounge **սրահ** - պատվիրակությունների ղեկավարների համար /կահավորված հարմարավետ բազկաթոռներով, աթոռներով, փոքր սեղաններով, հյուրասիրության հատվածով/: Նախատեսված 165 անձի համար /55 x 3 (1+2):
- **Delegates Lounge սրահ** - Պատվիրակությունների անդամների համար՝ նախատեսված 220 անձի համար /կահավորված հարմարավետ բազկաթոռներով, աթոռներով, փոքր սեղաններով, հյուրասիրության հատվածով/:
- **Լիագումար /Պլենար/ նիստի անցկացման համար նախատեսված սրահ**: Պլենար դահլիճի մուտքը պետք է լինի VIP սրահից, Delegates սրահի հարևանությամբ:

**Պլենար նիստերի դահլիճը պետք է** նախատեսված լինի 165 հոգու համար (երկրների կամ կազմակերպությունների ղեկավարներ 55 հոգի՝ միասնական սեղանի շուրջ և պատվիրակության 2-ական անդամ՝ հետևի հատված 110 հոգի/ (55x3(1+2)):

/անհրաժեշտ գույք՝ կլոր կամ օվալաձև սեղան և բազկաթոռ նախատեսված 55 հոգու համար, աթոռներ 110 հատ, էկրաններ սեղանի կենտրոնական մասում, տեսանելի 55 անդամներին, ինչպես նաև էկրաններ պատերին, տեսանելի պատվիրակության 110 անդամների համար, թարգմանչական խցիկներ, թարգմանչական սարքավորումներ/ականջակալներ, բարձրախոսների համակարգ՝ թարգմանությունների ասղիազդանշանի փոխանցման հնարավորություն հեռարձակողին, տպագրական խցիկ, հագեցած երեք համակարգիչով և երեք գունավոր տպիչներով/:

- **4 կլոր-սեղան քննարկումների անցկացման առանձին սրահներ**՝ յուրաքանչուր սրահ նախատեսված 15-16 անձի համար /անհրաժեշտ գույք՝ կլոր սեղան և բազկաթոռ նախատեսված 15-16 հոգու համար, բարձրախոսների համակարգ/: Այս փակ ձևաչափում երկրների առաջնորդները բաժանվում են ըստ նախապես ընտրված թեմատիկայի և յուրաքանչյուր երկրի ղեկավար ըստ այդմ մասնակցում է միայն 1 կլոր սեղան քննարկման: Երևանյան ԵՔՀ-ում նախնական լինելու է 4 թեմատիկ կլոր-սեղան քննարկում, ուստի յուրաքանչյուր սենյակում առաջնորդների քանակը լինելու է միջինում 15-16 հոգի: (Կլոր սեղանի շուրջ՝ պատվիրակությունների ղեկավարները՝ 1 կամ 2 հարակից աթոռ ավելացնելու հնարավորությամբ՝ անձնական թարգմանիչների համար):

***Բոլոր սրահների տեղաբաշխումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

**ՄՀՀ- ում նախատեսվում է նաև՝**

- **Երկկողմ ու բազմակողմ հանդիպումների շուրջ 18 սենյակներ (որոնցից 3 սենյակ՝ բազմակողմ հանդիպումների համար և 15 սենյակ՝ երկկողմ հանդիպումների համար)**՝ նախատեսված պատվիրակությունների ղեկավարների պաշտոնական հանդիպումների համար: **Սենյակները պետք է լինեն բրենդավորված ու** կահավորված՝ մասնավորապես **սեղան և բազկաթոռներ՝ 8-15 անձի համար, ինչպես նաև բոլոր մասնակից պետությունների և կազմակերպությունների համար սեղանի վրա դրվող դրոշներ** (յուրքանայուր դրոշից ունենալ 2-3 օրինակով՝ հնարավոր տեխնիկական խոտաններից խուսափելու նպատակով):
- VIP **սենյակներ**՝ որոշ պատվիրակությունների ղեկավարների համար (մինչև 3-5 սենյակ)
- Family Photo համար առանձնացված վայր/հատված, թեմատիկ դեկորացիայով backgroud:
- **Հավատարմագրված ԶԼՄ-ների համար մամուլի կենտրոն/սրահ**՝ նախատեսված մոտ 1000 անձի համար: ԶԼՄ ներկայացուցիչների մուտքը դեպի իրենց համար նախատեսված տարածք պարտադիր իրականացվում է անվտանգային ստուգման համակարգով /Security Scanner/: Սրահը գերհագեցած է անհրաժեշտ գույքով ու տեխնիկայով: ԶԼՄ-ների սրահը հագեցված է առնվազն 5 համակարգչով, 5 տպիչով՝ որոնք կունենան նաև սկանավորման հնարավորություն, A4 ֆորմատի թղթերով, power bank-երով, էլեկտրականություն ապահովող վարդակներով ու երկարացվող վարդակային լարերով և այլ անհրաժեշտ գույքով: Անհրաժեշտ է վերոգրյալ սենյակը մշտապես ապահովել տաք և սառը սնունդով, սուրճով, քացրեղենով, ինչպես նաև ալկոհոլային (ճաշի ընթացքում) ու ոչ ալկոհոլային խմիչքներով:
- **Մամուլի ասուլիսի և հարցազրույցների համար սրահներ**՝ 1 մեծ, 2-3 փոքր սրահ՝ նախատեսված երկրների առաջնորդների ու միջազգային կազմակերպությունների ղեկավարների մասնավոր հարցազրույցների համար՝ կահավորված և բրենդավորված՝ անհրաժեշտ դիմադիր սեղաններով, բարձրախոսներով ու այլ անհրաժեշտ գույքով:
- **Մամուլի կենտրոնի ներսում առանձնացված կամ առանձին մեկ սենյակ (10-15 անձի հաշվարկով) մամուլի կենտրոն ուղիղ մուտքով** ԶԼՄ ներկայացուցիչների հետ աշխատող ՀՀ գերատեսչությունների ներկայացուցիչների համար (staff only)՝ հագեցած 2 հատ համակարգչով, 2 հատ տպիչ սարքով և կահավորված ըստ անհրաժեշտության:
- Գագաթնաժողովի օրը Պատվիրակությունների ղեկավարների համար **առանձին ճաշի կազմակերպման սրահ**՝ 165 անձի համար:
- Առաջին **բժշկական օգնության սենյակ**՝ հագեցած անհրաժեշտ գույքով և դեղորայքով:
- Ծխելու համար առանձնացված վայրեր՝ անհրաժեշտ գույքով:
- **Անվտանգության աշխատակիցների համար սրահ**՝ պլենար դահլիճի վիդեո (առանց ձայն) հեռարձակման հնարավորությամբ, առնվազն 55 անձի համար (պլենար դահլիճի և VIP Lounge հարևանությամբ):

***Բոլոր սրահների տեղաբաշխումը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

***<u>Գագաթնաժողովի անցկացման վայրի նախապատրաստական աշխատանքների ժամանակացույցը, որը անհրաժեշտ է համաձայնեցնել պատվիրատուի հետ</u>***

| *<u>N</u>* | *<u>Ժամանակացույց</u>* | *<u>Կարգավիճակ</u>* | *<u>Նկարագրություն</u>* |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Մինչև 2026թ. փետրվարի 13-ը | Էլեկտրոնային հարթակների ստեղծում | Գազաթնաժողովի կայք, որտեղ տեղադրվելու է հիմնական տեղեկատվությունը: |
| 2 | Մինչև 2026թ. մարտի 2-ը | Էլեկտրոնային հարթակների անվտանգություն | Էլեկտրոնային հարթակների անվտանգության ստուգման և կարգաբերման ավարտ |
| 3 | Մինչև 2026թ. փետրվարի 20-ը | Գագաթնաժողովի անցկացման վայրի 2D/3D մոդելավորման վերջնական քարտեզ | Մոդելավորված քարտեզը անհրաժեշտ է՝ ժամանող պատվիրակությունների արարողակարգի և անվտանգության ծառայությունների աշխատակիցների հետ կիսվելու նպատակով: |
| 4 | Մինչև 2026թ. ապրիլի 25-ը | Տարածքի ֆիզիկական ենթակառուցվածքների պատրաստվածություն | Տարածքի բուն ենթկառուցվածների՝ նիստերի դահլիճների, կլոր սեղան քննարկումների սրահներ, հանդիպումների սենյակներ, մամուլի կենտրոնի ու հարակից նշված այլ սրահների առկայություն՝ պատվիրակությունների արարողակարգի և անվտանգության ծառայությունների աշխատակիցների համար պարտադիր շրջայց կազմակերպելու նպատակով |
| 5 | 2026թ. ապրիլի 20-ից 27-ը | Տարածքի այցելություն պատվիրակությունների նախապատրաստական խմբերի համար | Շրջայցի կազմակերպում և ողջ ենթակառուցվածքների ներկայացում |
| 6 | 2026թ. ապրիլի 27-ից 30-ը | Գագաթնաժողովի և մշակութային միջոցառումների փորձ | Գագաթնաժողովի կազմակերպման փորձեր պատվիրատուի մասնակցությամբ |

***Ի գիտություն՝*** *Բոլոր սրահները ձայնամեկուսացված են, գույքով և տեխնիկայով համալրված /ձայնային և լուսային համակարգեր, բարձրախոսներ, պլենար սրահը ապահովված է շուրջ 6 լեզուներով թարգմանությունների սարքերով ու խցիկներով/, ինչպես նաև ապահովվում է անխափան բոլոր սրահների օդափոխությունը: Բոլոր սրահներում՝ բացի մանրամասն նկարագրված հատուկ պահանջները, մշտապես առկա է ջուր, թեյ, սուրճ, հյուրասիրություն: Դահլիճները պետք է լինեն իրար կողք, մեկ հարթակի վրա, հեշտ հասանելի:*

***Ի գիտություն՝*** *Գագաթնաժողովի վայրի, դահլիճների, սրահների, երկկողմ հանդիպումների, մամուլի կենտրոնի տեղաբաշխման վերաբերյալ Կատարողը ներկայացնում է մոդելավորում 2D կամ 3D ձևաչափով /ըստ ժամանակացույցի/, նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:*

**Ամբողջ միջոցառման համար նախատեսված լեդ էկրանների, լուսային և ձայնային տեխնիկաի պարամետրերն են՝**

Լեդ էկրան 2.6մմ Uniview
Լեդ էկրանների կռավարման արտաքին սարքեր ( լրակազմ )
Լեդ էկրանի կառավարման սերվեր Comander
Լեդ էկրանի կառավարման սերվեր Resolume 7
Լեդ էկրան 3.91մմ
Ձայնաին համակարգ Adamson S10
Ձայնաին համակարգ Adamson Point 8
Ձայնաին համակարգ Adamson M212
Fidek FRS
Խոսափող լրակազմ
Ձայնի կառավարման համակարգ Alen&Heat Dlive S5000
Ձայնի կառավարման սարք Dante
Լեդ լուսատու սարք LightSky Pearl Wash 1240 RGBL
Լեդ լուսատու սարք Fine Art Fine 2000L BSWF
Լեդ լուսատու սարք Fine Art Fine 600L BSWF
Լուսատու սարք Fine Art Fine 450 Beam

Լեդ լուսատու սարք Fine Art Fine 1200C Strobe
Լեդ լուսատու սարք ClayPaky A. Leda B-EYE K20
Լեդ լուսատու սարք Light Sky Pike
Լեդ լուսատու սարք ARRI Sky Panel S60
Լեդ լուսատու սարք Charming Led Video Tube 1m
Լույսերի կառավարման համակարգ MA lighting MA3 Full size
Լույսերի կառավարման համակարգ MA lighting MA3 Compact
Լույսերի կառավարման արտաքին սարքMA lighting MA3 Processor L
Գծային վիդեո լեդ լուսատուների կառավարման ծրագիրMADRIX unlimited
Մետաղական կոնստրուկցիա ( լրակազմ ) 18*2*6 երկու հատ, 24*2*6 երկու հատ, 24*2*6երկու հատ, 24*2*6 երկու հատ:
Ալյումինե կոնստրուկցիա 1մ*53սմ
Ալյումինե կոնստրուկցիա 53սմ*53սմ
Ալյումինե կոնստրուկցիա 40սմ*40սմ
Ալյումինե կոնստրուկցիա 30սմ*30սմ
Էլ, ճախարակներ 1Տ
Էլ, ճախարակներ 500Կգ
Բեմի մոդուլ

## Բրենդավորում

### Միջոցառման բրենդավորում

- Մշակվել է տարբերանշանի /լոգոտիպի/ 3 տարբերակ, որոնք նախատեսված են թե՛ թվային, և թե՛ տպագիր կրիչների համար: Լոգոտիպը հակիրճ և հասկանալի ձևով փոխանցում է ստեղծագործական հայեցակարգի գաղափարը և պարունակում է անվանումը, անցկացման աշխարհագրությունը և տարեթիվը /EPC Yerevan 2026/ ԵՔՀ Երևան 2026/՝ բացառելով դրոշի ու զինանշանի կիրառումը: Լոգոտիպը հնարավոր է կիրառել և՛ հայերեն, և՛ անգլերեն տարբերակով: ***Տարբերանշանի /լոգոտիպի/ կիրառվող վերջնական տարբերակը անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:***
